Մեծ մոնթերի փուռվառը,
Իրիսների ժամհարը,
Դան, հա դան, քե ղուրբան,
Իմ ըրեխին ջան ղուրբան:

3. Դան, դան, դան կանեմ,
Օրը մի շահի բան կանեմ,
Շահին կտամ շամամին,
Շամամն էլ կտամ իմ բալին:

324. 1. Հարի, հարի, խնոցի,
Մեջւդ բարի, խնոցի,
Ունքդ կամար, խնոցի,
Մեջդ կարագ, խնոցի:
Ով որ ուտի էդ յուղից,
Պոունկը բարակ, խնոցի:

2. Հարի, Հարի, խնոցի,
Մեջդ բարի, խնոցի,
Ունքդ բարակ, խնոցի,
Մեջդ կարագ, խնոցի:
Մեր խնոցին հիվւանդ ա,
Էրկու խնչորի բանդ ա,
Հարի, հարի, խնոցի,
Մեջդ կարագ խնոցի:

## ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԵՐԳ

### 325. ՀՈՐՈՎԵԼ

Հորոլո, հորոլո,
Ջանիդ մեռնեմ, ա լոթի ջան,
Դուս էլար, դուս էլար,
Նվագը դուս ըլար, այ լոթի ջան.
Արի, արևիդ մեռնեմ, այ եզը ջան:
Թոլ արա ակները, թոլ արա,
Ջանիդ մեռնեմ, ա լոթի ջան,
Դուս էլար, դուս էլար, ա բալամ,
Նվագը դուս էլար, ա լոթի ջան,
Արի, ուսիդ մեռնեմ, ա եզը ջան, ա եզը.
Արի, լոթի-փոթի ջան, օ՜ օ՜,
Օրը լո, լա:
Արի գնանք, խոտ բերենք,
Արի՛, ա լոթի ջան,
Կովատեղա խոտը բերենք,
Ա լոթի ջան, այ ըմ,
Արևիդ մեռնեմ, ա լոթի ջան.
Հոլ արա, գնանք, հոլ,
Քոյիդ մեռնեմ, ա լոթի ջան,
Քերենք խոտը, ա բալամ, բերենք,
Ձմեռը որ ուտես, ա լոթի ջան:
Գնանք արտերը հնչենք, ա բալամ,
Հասել ա, հասել ա,
Գնանք, ա բալամ, արաը հնչենք
Ու բերենք կալսենք:
Ցորենն ու գարին ինչ ըլի,
Դարմանն ու խոտը քեզ ըլի,
Ա լոթի ջան, հո լո լո ըմ,
Այ ջանիդ մեռնեմ, ա լոթի,
Հո լոլո, լոլո, լո, հո լո:

### 326. ՀԱՐՍԱՆԵԿԱՆ ԵՐԳԵՐ

1. Հոգի ջան, ավնիվ հոգի,
Ինչպես մեկ գառն ես ինչ համար,
Ամառվա շվաք արա,
Չինարի ծառն ես ինչ համար:
Հագուստդ խամ չիթ լինի,
Ասլասից խաս ա ինչ համար,
Թե լինես վառման կրակ,
Ախպուրից սառն ես ինչ համար:
Քերանդ ոսկուց շինած,
Զուրխմի թաս ա ինչ համար:

2. Հարսը փիսին շնհավոր,
Ջան, շնհավոր, շնհավոր,
Փեշքեշ ենք տալի, շնհավոր,
Լավ կպահես, շնհավոր,
Խրատ կըտաս, շնհավոր,
Ջան, շնհավոր, շնհավոր:
Մեր հարսը շատ սիրուն ա,
Փեսի հետ մի բարչի ծերանա:
Հարսը փեսին շնհավոր,
Շնհավոր, ջան, շնհավոր:

327. Ա՜խ, աղե ջան, սանում ենք,
Հորն ու մորից հանում ենք:
Ա՜խ, աղե ջան, տանում ենք,
Տուն ու տեղից հանում ենք:

Աղջկա մեր լաց ըլի,
Քա չի՞ էլ լաց ըլի:
Ա՜խ, տանում ենք, տանում ենք,
Հորանց գյուղից հանում ենք:
Հարս ջան, դու լավ հարս կըլնես,
Անծավորին կըհտրգես:
Ա՜խ, տանում ենք, տանում ենք,
Երտմիցը հանում ենք:

328. Հարսանիքը եկավ վերին կալերով,
Հարսին շորեր բերին ոսկե ծաղերով,
Դե հագի, դե կապի, եկել ենք, տանենք,
Չես հագնի, չես կապի, վոռով կտանենք:
Պապայիդ խաբեցինք մի բաժակ գինով,
Մամայիդ խաբեցինք քիշմիր շալերով,
Դե հագի, դե կապի, եկել ենք, տանենք,
Չես հագնի, չես կապի, վոռով կտանենք:
Եղբորդ խաբեցինք մի շիշ կոնյակով,
Քեզ էլ խաբեցինք սիրուն տղայով,
Դե հագի, դե կապի, եկել ենք տանենք,
Չես հագնի, չես կապի, վոռով կտանենք:

329. Օ՜ֆ, աման, ադե ջան, տանում են,
Քուրն ախպորիցը հանում են,
Թող տանեն, ադե ջան, թող տանեն,
Քիրն ախպորիցը թող եանեն:
Օ՜ֆ, աման, ադե ջան, տանում են,
Աղջիկն մորիցն հանում են,
Թող տանեն, ադե ջան, թող տանեն,
Աղջիկն մորից թող հանեն:
Օ՜ֆ, աման, ադե ջան, տանում են,
Ընջիլագից հանում են,
Թող տանեն, ադե ջան, թող տանեն,
Ընջիլագից թող հանեն:

330. Թագվորի մեր, դիմայի,
Դիմայի, վայ, դիմայի,
Գլխիդ տվող ենք բերել,
Ծերեփդ խլող ենք բերել,
Բալնիքդ առնող ենք բերել,
Տեղդ գրավող ենք բերել,
Դե դիմայի, դիմայի,
Ջան արի, դիմայի:

331. Հարսանիքդ բարի, շնորհավոր լինի, շնորհավոր լինի,
Բոլոր նառածներիս տչքը լույս լինի; աչքը լույս լինի,
Լցրեք բաժտկները արաղ ու գինի,
Լցրեք բաժակները արաղ ու գինի,
Խմենք բարեկամներ, մեկ անուշ լինի,
Խմենք բարեկսամներ, մեկ անուշ լինի:
Իգիթը՝ եղբայրը ջոկել է լավը,
Իգիթը՝ եղբայրը ջոկել է լավը,
Թող բարով վայելի իր ջոկած հարսը,
Թող բարով վայելի իր ջոկած հարսը:
Գինով է լցված քավորի թասը, քավորի թասը,
Թասին է արժանի մեր թագա հարսը, մեր թագա հարսը,
Լցնենք բաժակները արաղ ու գինի,
Լցնենք բաժակները արաղ ու գինի,
Խմենք բարեկամներ, մեկ անուշ լինի,
Խմենք րարեկամներ, մեկ անուշ լինի:

## ԼՈՌՈՒՆ ՆՎԻՐՎԱԾ ԵՐԳԵՐ

332. Լալվար սարի հայն էր աղի, ջուրն էր լեղի,
Ցարս կորավ անաեղի:
Լալվար սարը կաո ընգավ,
Լալվար քարը վար ընգավ,
Լալվարիցը գրածը
Չի լավայնի տվածը:
Սարից անցա, գնայի,
Ջուրն ընգա, մնայի,
Սարիցն էկան ղշերը,
Խաբար պերին գշերը:
Լալվար սարը բարչրն ա,
Սիրած յարս քաղցրն ա,
Ա՜խ, իմ սիրածն ինչ կանեմ,
Լալվար սարեն վարդ տանեմ:

333. Քոշաքարի չիմ չոլերը ծաղկել ա,
Ցարս հանդից հեսա նոր աուն եկել ա,
Ման գյամ, ման գյամ Սև սանափրւր վարումը,
Մեկ էլ ման գյամ Քոշաքարի սարումը:

Հորս չին նսաել եմ, որ ինչ տուն աանի,
Ես աղջիկ եմ, ինչ հավան ա իմ նավին,
Մտն ատմ, ման գյամ Սև սանափրւր վարումը,
Մեկ էլ ման գյամ Քոշաքարի սարումը: